ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐ

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ԳԵՂԱՆՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Մայիս 2019

Իրականացնող՝ ՓԳԹ Անահիտ Մկրտչյան

«Համայնքային փոխօգնություն» սոցիալական ՀԿ-ի ղեկավար

ԵՐԵՎԱՆ, մայիս 2019

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» դրամաշնորհային ծրագրի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի ստանդարտի 1-ին պահանջի 1.3 կետի (Քաղաքացիական հասարակության մասնակցություն), 7-րդ պահանջի 7.1 կետի (Հասարակական դեբատների անցկացում) և Քաղաքացիական հասարակության մասնակցության արձանագրության 2.5 կետի (Հասարակության կողմից որոշումների կայացման գործընթացի ապահովում) կատարումը:

Որպես ծրագրի թիրախ ընտրված Լոռի, Գեղարքունիք, Սյունիք մարզերի հանքարդյունաբերությանն առնչվող համայնքներից (Լոռու մարզի Ախթալա (+Ճոճկան, Մեծ Այրում), Շնող (+Թեղուտ), Գեղարքունիքի մարզի Սոթք, Սյունիքի մարզի խոշորացված Կապան համայնք (Գեղանուշ), Քաջարան համայնք (+Արծվանիկ, Սյունիք), Մեղրի համայնք (Ագարակ) երրորդ այցելությունը կազմակերպվել է դեպի Կապան խոշորացված համայնք իր Գեղանուշ բնակավայրով: Տես քարտեզ N1

Քարտեզ 1 Սյունիքի մարզ, Կապան համայնք, Գեղանուշ բնակավայր

Կապան համայնքը Սյունիքի մարզի մարզկենտրոնն է, որը 2017թ. նոյեմբերից, իր մեջ միավորելով տարածաշրջանի 38 բնակավայր, դարձել է Կապան խոշորացված

համայնք: Այն գտնվում է մայրաքաղաքից 301 կմ հարավ-արևելք՝ Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին, բարձրությունը ծովի մակարդակից միջինում կազմում է 910 մ:

Կապան քաղաքային համայնքը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու հյուսիսում: Կապան խոշորացված համայնքի տարածքը 79981.45 հա է, որից 4963.89 հա՝ Կապան քաղաքն է:

2019թ. փետրվարի տվյալներով Կապան խոշորացված համայնքում կա 328 ընտանեկան նպաստ ստացող, 386 սոցիալական նպաստ ստացող և 33 եռամսյա հրատապ օգնություն ստացած[1]: Կապան քաղաքային համայնքում ապրում է 39024 մարդ: Բնակչությունն ընդգրկված է հանքարդյունաբերության[2], սպասարկման, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտներում:

Կապան խոշորացված համայնքի **Գեղանուշ** բնակավայրի մակերեսը 21.9 կմ^2 է, 2010թ. գյուղում ապրում էր 356 մարդ:

Նկար 1. Գեղանուշ բնակավայր

Գեղանուշի բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և դաշտավարությամբ: Համաձայն 2019թ. մարտի պաշտոնական տվյալների՝ Գեղանուշ բնակավայրում կա 3 նպաստառու, 2 սոցիալական նպաստ ստացող[3]:

Կապանի տարածաշրջանը հարուստ է գունավոր և ազնիվ մետաղների պաշարներով:

---

[1] http://www.mlsa.am/?page_id=368

[2] https://staff.am/am/company/kapan-mining-and-processing-enterprise-cjsc

[3] http://www.mlsa.am/?page_id=368

Կապան քաղաքային համայնքի միակ հանքարդյունաբերական ձեռնարկությունը Կապանի լեռնահարստացման կոմբինատն է, որտեղ վերամշակվում է Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրից արդյունահանված հանքաքարը: 2002թ-ից մինչ օրս Կապանի լեռնահարստացման կոմբինատը փոխել է մի քանի սեփականատեր: 2002թ. նոյեմբերին «Դենո Գոլդ Մայնինգ Քոմփանի» ընկերությունը սեփականացրեց Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը և ձեռք բերեց Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի և Կապանի կենտրոնական հանքավայրի շահագործման իրավունքը: Սակայն 2009թ-ին ընկերությունը հրաժարվեց Կապանի կենտրոնական հանքավայրի շահագործումից և վերադարձրեց այն պետությանը: 2013թ-ին «Դենո Գոլդ Մայնինգ Քոմփանի» ընկերությունը վերանվանվեց «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ: 2016 թ. «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ից կոմբինատը ձեռք բերեց ռուսական «Պոլիմետալ ինթերնեյշնլ» խումբը: 2018թ-ին «Պոլիմետալ»-ը կոմբինատը վաճառեց «Չաարատ Գոլդ Հոլդինգս» ընկերությանը: Ներկայումս կոմբինատը կոչվում է «Չաարատ Կապան», որը շահագործում է Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը և վերամշակում է հանքավայրից արդյունահանված հանքաքարը:

Հայաստանը, 2017 թվականին դառնալով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) թեկնածու երկիր[4], պարտավորություններ է ստանձնել պետական, գործարար համակարգերի և քաղաքացիական հասարակության երկխոսության միջոցով հրապարակային ձևով ապահովել արդյունահանող ճյուղերի գործունեության ֆինանսական թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այս առնչությամբ ձեռնարկած մեր ուսումնասիրությունը նպատակ ուներ՝ պարզելու ազդակիր բնակչության գնահատականը Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի (ներկայումս «Չաարտ Կապան») գործունեության սոցիալական ազդեցությունների, դրանց հարուցած խնդիրների հաղթահարմանն ուղղված վերաբերելի օրենսդրության վերաբերյալ, Կապան քաղաքային համայնքի և Գեղանուշ բնակավայրի բնակիչների տեղեկացվածության մակարդակը և սրա հիման վրա եզրակացություն անելու

[4] https://eiti.org/news/eiti-board-welcomes-armenia-to-eiti-family

համայնքի շահերի պաշտպանությանը միտված համայնքի ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի այլընտրանքային/գործող անդամ դարձնելու և ԱՃԹՆ գործընթացում քաղաքացիական հասարակության դերակատարներին ներգրավվելու հնարավորությունների մասին:

Մասնավորապես, Կապան քաղաքային համայնքի վրա Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության, այդ թվում Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների գնահատման նպատակով իրականացված խորին հարցազրույցը ձևակերպել էր հետևյալ խնդիրները՝

1. Բացահայտել Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության, այդ թվում Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության մակարդակը և դրանք ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. Արձանագրել հանքի շահագործման և կոմբինատի աշխատանքի արդյունքում ազդակիր համայնքների մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված վնասների բնակչության գնահատականները
3. Պարզել հանքի շահագործման և կոմբինատի աշխատանքի ընթացքում առաջացող վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ բնակիչների իրազեկվածության մակարդակը
4. Պարզել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործընթացներում բնակչության մասնակցության հնարավորությունները
5. Արձանագրել օրենսդրության կիրարկմամբ Կապանում ծավալվող հանքարդյունաբերական գործունեության հետևանքների հաղթահարմանն ուղղված բնակիչների առաջարկությունները

Մշակվել են առաջարկություններ՝ ուղղված քաղաքացիական հասարակության կողմից բնակչության մասնակցային վարքը ձևավորելուն ու ԱՃԹՆ

գործընթացներում լիակատար ընդգրկվելու հնարավորությունների օգտագործմանն ու դժվարությունների հաղթահարմանը:

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցազրույցի նպատակին՝ Կապան քաղաքային համայնքի և Գեղանուշ բնակավայրի վրա Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում ընդգրկվելու մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունները բացահայտելու համար ընտրվել է խորին հարցազրույցի մեթոդը:

Որպես գործիք ընտրվել է հարցազրույցի ուղեցույցը, որի բաժիններն են.

1. Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. ազդակիր համայնքների օդին, ջրին, հողին հասցված վնասների գնահատականները
3. բնակիչների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության ընթացքում առաջացող վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման հարցերում
4. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները և Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման վերաբերյալ բնակիչների առաջարկությունները

Որպես հարցման օբյեկտ ընտրվել են Կապան քաղաքային համայնքը և Գեղանուշ բնակավայրը: Հարցազրույց վարվել է 28 տնային տնտեսություններում (այսուհետ SS)՝ Կապան՝ 17 SS և Գեղանուշ՝ 11 SS: Հարցազրույց վերցվել է 11 իգական և 17 արական սեռի ներկայացուցչից հետևյալ տարիքային խմբերից՝ (18-25)՝ 4 SS ներկայացուցիչ, (26-35)՝ 9, (36-45)՝ 10, (46-55)՝ 5, (56 և ավել)՝ 0 SS ներկայացուցիչ:

Հարցազրույցին մասնակցել են մոտ յոթ մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսանողներ, տնային տնտեսուհիներ, գործազուրկներ, մտավոր և ֆիզիկական աշխատանքի ներկայացուցիչներ:

Նկար 2 Հարցազրույց Կապան քաղաքային համայնքում

Հարցազրույցները բացահայտեցին, որ կոմբինատի աշխատանքի և Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները եղել են հանրային լսումները, համայնքային ժողովների կազմակերպումը, քննարկումները: Սակայն կոմբինատի ներկայացուցիչները բնակիչներին չեն տեղեկացրել կոմբինատի գործունեության հետևանքով համայնքին պատճառած որևէ բացասական սոցիալ-էկոլոգիական ազդեցության մասին: Սակայն վաղուց ի վեր և այսօր այդ ազդեցությունները տեսանելի են, սուր արտահայտված և մեր հարցազրույցների ժամանակ դրանք բնակիչների կողմից նույնական գնահատականների են արժանացվել: Կոմբինատի կողմից աշխատատեղերի տրամադրմանն ու իր աշխատողների ապահովագրությանը վերաբերող դրական ազդեցությունների հետ մեկտեղ բնակիչներն օդի, ջրի, հողի աղտոտման, ենթակառուցվածքների վիճակի վատացման խնդիրներ են ձևակերպել: Իսկ ինչ վերաբերում է բացասական ազդեցությունների վերացմանն ու կանխարգելմանը, մեր հարցազրույցի

մասնակից ՏՏ-ից միայն 8-10-ն էր տեղյակ այդ ուղղությամբ կատարվող աշխատանքներից՝ այն էլ միայն կապանցիները:

Սեփական իրավունքների մասին, վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ բնակիչների իրազեկվածությունը հազիվ միջին մակարդակի է, որովհետև հարցազրույցի մասնակիցների կեսից ավելին տեղյակ չեն իրենց իրավունքների պաշտպանությանն օժանդակող օրենքներից, ԱՃԹՆ գործընթացներում բազմաշահառու խմբերում ընդգրկվելու իրենց հնարավորությունից:

Բնակչության հետ աշխատելու տեսակետից Կապանում գործող բնապահպանական ՀԿ-ների, անհատ իրավապաշտպանների կարողությունն ու մասնակցային վարքը, երևանյան ՀԿ-ների հետ նրանց համագործակցության հնարավորությունները բավական բարձր են: Սակայն, ա.մարզի բնապահպանական ՀԿ-ների ակտիվությունը տարածվում է քաղաքային բնակավայրի վրա, սակավ՝ գյուղականի, բ. բնապահպանական ՀԿ - Կապանի լեռնահարստացման կոմբինատ հարթության վրա պայքարում բնակչությունը որպես մասնակից կողմ և գործընկեր լիարժեք ընդգրկված չէ, գ. բնակիչների համար առ այսօր անհասկանալի համայնքային միավորման հիմքը նույն համայնքի ներսում ստեղծել է գյուղ-քաղաք անջրպետ, երբեմն՝ կողմնակալություն:

Բացահայտումների հիման վրա արվել են այսպիսի եզրակացություններ՝

ԱՌԱՋԻՆ. Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներ հանդիսացող հանրային լսումների, համայնքային ժողովների ու քննարկումների ժամանակ Կոմբինատի ներկայացուցիչները չեն խոսել իրենց գործունեության արդյունքում համայնքի վրա հնարավոր բացասական սոցիալ-էկոլոգիական ազդեցությունների մասին: Իսկ համայնքի օդին, ջրին, հողին հասցված բացասական սոցիալական ազդեցությունները բնակիչներին այսօր տեսանելի և մտահոգիչ են՝ կապված թե ջրի մաքրության, թե պոչամբարի անվտանգության ու հուսալիության հետ:

ԵՐԿՐՈՐԴ. **Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման և** կոմբինատի գործունեության արդյունքում առաջացող վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների, սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը միջին մակարդակի է, այն էլ հիմնականում Կապան քաղաքային համայնքում:

ԵՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները տեսանելի են քաղաքային բնակչության շրջանում, սակայն այս պահին ԱՃԹՆ գործընթացներում հատկապես գյուղական բնակավայրի բնակչության ընդգրկվելու հնարավորությունները մեծացնելու կարիք կա: Առաջացել են խնդիրներ՝ կապված համայնքների խոշորացման հետևանքով ՏԻՄ կազմակերպչական ընթացակարգերի անկատարության, հանքին ուժեղ և թույլ ազդակիր համայնք համարվելու չափորոշիչների ճշգրտման, մտածելակերպային ու քաղաքացիական հասունության էական տարբերությունների հաղթահարման հետ:

Ձևակերպվել են հետևյալ առաջարկությունները՝

ԱՌԱՋԻՆ ՏԻՄ-ի կողմից համայնքների խոշորացման հետևանքով նախկին ազդակիր, նոր միացած բնակավայրերի միասնական կենսագործունեության ապահովման համար ՏԻՄ կազմակերպչական ընթացակարգերի անկատարության հաղթահարում, ազդակիրության մակարդակի որոշման չափորոշիչների վերանայում, նույն խոշորացված համայնքում մարդկային և ենթակառուցվածքային ռեսուրսների ընդգծված անհավասարության հաղթահարմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:

ԵՐԿՈՐԴ, Բնակչության համար կոմբինատի գործունեության տեսանելի և մտահոգիչ սոցիալ-էկոլոգիական բացասական ազդեցությունները՝ կապված թե՛հողի ու ջրի մաքրության, թե՛ պոչամբարի անվտանգության ու հուսալիության հետ, հաղթահարել՝ հասցված վնասներին համարժեք բնապահպանական վճարների չափի վերանայմամբ, հստակեցմամբ և ըստ այդմ օգտագործմամբ: Կոմբինատը պետք է պարտավորվի կատարել բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված շրջակա միջավայրին պատճառվող վնասի նվազեցմանը:

ԵՐՐՈՐԴ, Կոմբինատի հարուցած սոցիալ-էկոլոգիական բացասական ազդեցությունները հաղթահարել և կանխարգելել Սյունիքի մարզի

բնապահպանական ՀԿ-ների և առանձին անհատ մասնագետների կողմից բնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացման և բնակչության ձևակերպած խնդիրների շուրջ կոմբինատի հետ ուղղակի կապի հաստատման միջոցով: Սա կհաղթահարի ՏԻՄ-կոմբինատ ուղիղ կապում նախկինում շրջանառված ի վնաս բնակչությանը պայմանավորվածությունները:

<u>ՉՈՐՐՈՐԴ,</u> ԱՃԹՆ գործընթացներում քաղաքային բնակչության շրջանում մասամբ տեսանելի ընդգրկման հնարավորությունները և գյուղական բնակավայրի բնակչության ընդգրկվելու թույլ հնարավորությունները մեծացնելու համար բնապահպանական ՀԿ-ների և անահատ մասնագետների կողմից բնակիչների բոլոր շերտերի կրթում և միասնական ճակատով ԱՃԹՆ գործընթացներում ընդգրկում:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ. Կապանի լեռնահարստացման կոմբինատի (ներկայումս «Չաարտ Կապան») գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության նախնական տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները:

Մայիսի առաջին շաբաթում Կապան քաղաքային համայնքում և Գեղանուշ բնակավայրում մեր կողմից իրականացված հարցազրույցները բացահայտեցին, որ կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները անցկացված հանրային լսումները, համայնքային ժողովները և քննարկումներն են եղել: Սակայն, բնակիչները չեն հիշում, որ կոմբինատը նախապես խոսեր իր գործունեության արդյունքում համայնքի վրա հնարավոր բացասական սոցիալ-էկոլոգիական ազդեցությունների մասին: Սակայն այդ բացասական ազդեցությունները տեսանելի են, սուր արտահայտված և դրանք բնակիչների կողմից այսպիսի գնահատականներին արժանացած՝ Տես աղյուսակ 1

Աղյուսակ N1

	Բացասական ազդեցություն (Տեղային Տետ.)		Ոչ մի ազդեցություն		Դրական ազդեցություն (SS)		Դ/Պ
	Կապան	Գեղանուշ	Կապան	Գեղանուշ	Կապան	Գեղանուշ	Կապան, Գեղանուշ
1. Խմելու ջրի մաքրություն	12	6	5	5	0	0	0
2. Օդի մաքրություն	14	11	3	0	0	0	0
3. Ոռոգման ջրի մաքրություն	16	5	1	3	0	0	3
4. Բանջարեղենի և մրգի որակ	15	10	2	0	0	0	1
5. Համայնքային և միջհամայնքային ճանապարհների որակ	13	10	3	0	1	0	1
6. Գյուղատնտեսական նշանակության հողերի քանակ, որակ	17	9	0	2	0	0	0
7. Աշխատատեղեր	1	6	0	1	16	4	0
8. Ձեռնարկության աշխատողների ապահովագրություն	0	0	6	6	16	0	0
9. Համայնքի խոցելի խմբերի աջակցություն	5	3	1	7	10	1	1

Աղյուսակից տեսնում ենք, որ բացի 7, 8-րդ կետերի, որ վերաբերում են կոմբինատում աշխատատեղերի տրամադրմանն ու այդ աշխատողների ապահովագրությանը, մնացած բոլոր տողերով մենք ունենք բացասական ազդեցությունների շարք՝ կապված թե՛ օդի, ջրի, հողի աղտոտման, թե՛ ենթակառուցվածքների վիճակի հետ: «Կոմբինատի գործունեության արդյունքում վնասակար ազդեցություններ եղել են ու կան, սակայն մինչև հիմա ստիպել են լռել, հաշտվել դրա հետ», - ասաց Գեղանուշից մի նախկին պաշտոնյա:

Կոմբինատի՝ համայնքի վրա թողած բացասական սոցիալական ազդեցությունների մեր անհանգստությունը հաստատեցին 2018թ. դեկտեմբերին Գեղանուշի պոչամբարի անվտանգությունն ու հուսալիությունը բարձրացնելու աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկման ժամանակ հնչեցված «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալները: Անդրադառնալով ջրային ռեսուրսների վրա պոչամբարի ազդեցությանը՝ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին» 2017թ. ներկայացրած տեղեկանքում ջրերի աղտոտումը հիմնականում կապում են դրանում ամոնիում

իոնի, նիտրիտ իոնի, ցինկի, պղինձի, կադմիումի, վանադիումի և երկաթի բարձր պարունակությամբ: Մասնավորապես, Քաջարանից և Կապանից ներքև հատվածներում ջուրը «վատ» որակի (5-րդ դաս) է, Կապանից վերև ընկած հատվածում՝ «միջակ» որակի (3-րդ դաս): Իսկ ինժեներական հետազոտությունների, կատարողական տեղահանույթների և փաստացի տվյալների նյութերի հիման վրա հայտնաբերվել են պոչամբարի փաստացի վիճակի անհամապատասխանություններ աշխատանքային նախագծին և անվտանգության պահանջներին: Իսկ Հյուսիսային պատվարի կայունությունն ապահովված չէ հաշվարկային առավելագույն երկրաշարժի դեպքում»:[5] Ավելացնենք, որ պատվարի ստորին բիեֆում 8.5 բալը գերազանցող երկրաշարժի դեպքում հնարավոր է Գեղանուշի պոչամբարի պատվարի փլուզում և պուլպայի արտահոսք, որը կարող է ծածկել պատվարից ներքև ընկած տարածքները, ներառյալ արտադրական և այլ շինություններ, հաղորդակցության և այլ ենթակառուցվածներ: «Պատվարի հետ միասին կքանդվի Գեղանուշ բնակավայրի ճանապարհի՝ պատվարի վրայով անցնող հատվածը: Այդուհետ պոչերի զանգվածը կարող է Ողջի գետի հունը լցվելով արգելափակել այն՝ ստեղծելով Մ2 միջպետական նշանակության ավտոճանապարհի ջրածածկման վտանգ, ինչն ուժեղ երկրաշարժից հետո ստեղծված իրավիճակում առանձնապես վտանգավոր է, քանի որ խոչընդոտներ կառաջանան օպերատիվ արձագանքման և տարերային աղետի հետևանքների վերացման աշխատանքների համար»[6]:

Նշենք, որ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից 2018թ-ի վերջին բնապահպանական փորձաքննության ներկայացված «Գեղանուշի պոչամբարի հուսալիության և անվտանգության բարձրացման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրվել տեխնիկական առաջադրանք, որից հետո հայտը փրձաքննության հիմնական փուլ չի մտել:

---

[5] https://syuniacyerkir.am/news13/12/2018

[6] Նույնը

Մեզ համար հետաքրքրություն ներկայացրեց պարզել, թե վերջին 3-5 տարում ինչ է արվել կոմբինատի գործունեության բացասական սոցիալական ազդեցությունների չեզոքացման կամ դրանց հետագա կանխարգելման համար և ինչ որակով:

Մեր հարցազրույցի մասնակիցներից, որոնք ներկայացնում են մասնագիտությունների, զբաղմունքների ու սեկտորային ընդգրկման մեծ գունապնակ, 28-ից միայն 8-10 մարդ էր տեղյակ կատարված ու կատարվող աշխատանքների փաստերին, այն էլ միայն կապանցիները: Սոցիալական ազդեցությունների 15 բնապահպանական ուղղություններով («Թափոնների անվտանգ հեռացում», «Հատուկ պոլիգոնների ստեղծում», «Գործող աղբավայրերի բարելավում», «Աղտոտված տարածքների մաքրում ու վերականգնում», «Դեպի ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքի նվազեցում, կասեցում, ջրային ռեսուրսների պահպանություն», «Կեղտաջրերի վերամշակում, կոյուղու համակարգի բարելավում», «Օդի մաքրության պահպանություն», «Աղմուկից, վիբրացիայից և ճառագայթահարումից պաշտպանություն», «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասազերծում», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանություն», «Տեղեկատվության տարածում, էկոլոգիական կրթություն», «Բնակչության առողջական վիճակի զննությունների իրականացում» և «Անհրաժեշտ բժշկական սարքավորումների տրամադրում») կատարված հիշատակումներում աշխատանքների իրականացնողների մեջ հնչեցվել է կոմբինատի անունը, իսկ կատարված աշխատանքների որակը գնահատվել՝ «միջին»: Ասենք, որ նախ, կատարված աշխատանքների մասին վկայողների թիվը խիստ փոքր է և երկրորդ, դրանց որակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականները ստուգման կարիք ունեն, ինչը մեր խնդրից դուրս էր:

Այս աշխատանքներն իրականացնողների մեջ հնչեցվել են նաև ՀԿ-ները ու քաղաքապետարանը հատկապես «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասազերծում», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանություն», «Տեղեկատվության տարածում, էկոլոգիական կրթություն» ուղղություններով: Ի տարբերություն Թեղուտ, Սոթք համայնքների հարզազրույցների արդյունքների՝ Կապանում գործող ՀԿ-ները

(«Խուստուփ», ԱՐԿ բնապահպանական, «Սյունիք-Զարգացում» ՀԿ-ներ), իրավապաշտպանները մասնակցում են համայնքների իրազեկման, բնակչությանը կոմբինատի գործունեության վերահսկման մեջ ներգրավման, առաջարկների մշակման գործում: Այդ մասին են վկայում Կապանի հանդիպմանը նրանց ցուցաբերած ակտիվությունը ու մեր հարցազրույցի որոշ մասնակիցների հաղորդած տեղեկատվությունը: Մասնավորապես, բոլորովին վերջերս «Սյունիք-Զարգացում» ՀԿ-ի 2019թ. ապրիլի 29-ին կազմակերպած «Ես և շրջակա միջավայրը» թեմայով հանդիպում-քննարկումը միտված է եղել մարզի երիտասարդներին շրջակա միջավայրի մասին նոր գիտելիքների փոխանցմանը և իրազեկվածության ավելացմանը:

Ի տարբերություն կապանցիների, Գեղանուշ բնակավայրից և ոչ մեկը տեղյակ չէ ոչ նշված ՀԿ-ների գործունեությունից, ոչ վերոնշյալ աշխատանքներից:

Ինչ վերաբերում է հանքի և կոմբինատի շահագործմամբ բնակիչների առողջությանը հասցրած վնասների կանխարգելմանը և այդ կապակցությամբ ստացված ոչ ֆորմալ տեղեկատվությանն առ այն, որ կոմբինատը «բնակչության առողջական վիճակի զննություններ է իրականացում» և «անհրաժեշտ բժշկական սարքավորումներ տրամադրում», ասենք, որ հարցազրույցի մասնակիցները շեշտել են, որ դրանք արվել են կոմբինատի աշխատողների համար միայն:

Հավանաբար, այս անտեղյակության մասին էին ակնարկում այն գեղանուշցիները, ովքեր ասում էին, որ կոմբինատի գործունեության բացասական սոցիալական հետևանքները հաղթահարելու համար նախատեսվող աշխատանքներին բնակչությունը չի տեղեկացվում, նախապես իրենց կարծիքը չի լսվում:

28 ՏՏ-ներում իրականացված հարցազրույցի մասնակիցներից միայն 7-ում (4 կապանցի և 3 գեղանուշցի) փաստեցին, որ «հանքի ընդհանուր գործունեության վերահսկման», «հանքի գործունեության թափանցիկության նախաձեռնման», «հանքի գործունեության մասին զեկույցների քննարկման ու որոշումների կայացման» գործընթացներին բնակիչները «մասամբ» ներգրավվել են: Սակայն սա հուսադրող տեղեկատվություն չէ, որովհետև այսպես պատասխանողները ՀԿ-ի,

մարզպետարանի, ՏԻՄ աշխատակիցներ էին, որոնցից առաջինը սեփական նախաձեռնությամբ է մասնակցել, իսկ մյուսներն ի պաշտոնե: Սա չի կարող վկայել բնակչության մասնակցային վարքի մասին:

2019թ. մայիսին լսեցինք բնակչության կարծիքը կոմբինատի գործունեության վերահսկման աշխատանքներում ընդհանրապես ընդգրկված չլինելու մասին, որից բողոքում էին և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերում: Մինչդեռ 2017թ. փետրվարի 6-ին, երբ կոմբինատը պատկանում էր «Պոլիմետալ Ինթերնեյշնլ» ընկերությանը, կոմբինատի ղեկավարությունը հայտարարություն էր տարածել, որ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն պատրաստ է բաց և կառուցողական երկխոսության ինչպես բնապահպանական հասարակական կազմակերպությունների, այնպես էլ շահագրգիռ հասարակայնության այլ ներկայացուցիչների հետ[7] :

ԵՐԿՐՈՐԴ. Սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը՝ հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ

2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս օրենքում նշված ձեռնարկություններին ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի առաջարկների դիմաց պետական բյուջեից ստանալ սուբվենցիաներ, որոնք ձևավորվում են ձեռնարկությունների՝ պետական բյուջե վճարած բնապահպանական վճարներից[8]:

Նշենք, որ Կապան համայնքն ազդակիր է նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից (մոտ 30 - 40%-ի չափով), ուստի, հստակ չեն տարանջատվում, թե իրականացված բնապահպանական նպատակային ծրագրերը Կապանի, թե Զանգեզուրի կոմբինատների բնապահպանական վճարներից են կատարվում և ինչ չափով:

---

[7] https://www.ecolur.org/hy/news/mining/kapan

[8] **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը** Ընդունված է 2001 թվականին , **<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հարցազրույցի մասնակիցների կեսից ավելին տեղյակ չէր վերոնշյալ օրենքին, իսկ տասը կապանցիներ և մեկ գեղանուշցի, որ «մասամբ» կամ «լիովին» տեղյակ էին օրենքին, հստակ նկարագրել են օրենքի օգտակարությունը համայնքի համար:

Սեփական իրավունքների մեծամասնության չիմացության վկայությունն է նաև «Ինչպե՞ս կգնահատեիք վերջին 3-5 տարում համայնքում հանքի սոցիալական հետևանքների կանխարգելմանն ու ազդեցությունների հաղթահարմանն ուղղված իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող ծրագրերը» հարցին ի պատասխան 28-ից 20 տնային տնտեսության անտեղյակությունը:

Հատկապես գեղանուշցիները խնդրել են. «Օրենքները *պարզեցնել* և բանավոր մանրամասն բացատրել բնակիչներին, որպեսզի իրենք հասկանան ինչպես կարող են օգտագործել կոմբինատի բնապահպանական վճարները»:

ԵՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները:

Իրենց բնակավայրին կից գործող Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության և Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման բացասական սոցիալական հետևանքներին առնչվող օրենսդրությունից մարդկանց թույլ տեղեկացվածությունը տեղիք է տալիս մտածելու, որ այս պահին ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները թույլ են, հատկապես գյուղական բնակավայրերի:

Մեր զրուցակիցների մեծ մասը չգիտեր բնապահպանական ծրագրերի այն պարտադիր ուղղությունները՝ որոնք հանքի բնապահպանական վճարներով ենթակա են կանխարգելման կամ հաղթահարման: Կապան համայնքի բնակիչների քաղաքացիական կրավորականության ու սեփական իրավունքների պաշտպանության հնարավորություններից ոչ բավարար օգտվելու մասին է վկայում «Ի՞նչ չափով են Ձեր համայնքի բնակիչները ներգրավված հետևյալ գործընթացներում» հարցին 28 հարցազրույցից ընդամենը 6-ի դեպքում մեր ստացած «մասամբ» պատասխանը: Նշենք, որ առաջարկված պատասխանների շարքն այսպիսին էր՝ «Վերահսկել հանքի ընդհանուր գործունեությունը», «Նախաձեռնել հանքի գործունեության թափանցիկությունը», «Քննարկել հանքի գործունեության

մասին զեկույցները», «Մասնակցել հանքի գործունեությանը վերաբերող որոշումների կայացմանը»:

Մենք արձանագրեցինք, որ

- բնակչության հետ աշխատելու տեսակետից Կապանում գործող

բնապահպանական ՀԿ-ների, անհատ իրավապաշտպանների կարողությունն ու մասնակցային վարքը, երևանյան ՀԿ-ների հետ նրանց համագործակցության հնարավորությունները խոստումնալից են

- այս ակտիվիստների «կռիվը» տեղի է ունենում հիմնականում ՀԿ - Կապանի

լեռնահարստացման կոմբինատ հարթության վրա և բնակչությունը որպես մասնակից կողմ և գործընկեր դրանում բավարար ընդգրկված չէ

- մարզի բնապահպանական ՀԿ-ների ակտիվությունը տարածվում է

քաղաքային բնակավայրի վրա, բայց ոչ գյուղականի նախ այն պատճառով, որ ՀԿ-ները գյուղերի բնակիչների հետ աշխատելու բավարար ինստիտուցիոնալ կարողություններ չունեն և երկրորդ, բնակիչների համար առ այսօր անհասկանալի համայնքային միավորման հիմքը նույն համայնքի ներսում ստեղծել է գյուղ-քաղաք անջրպետ, երբեմն՝ կողմնակալություն ու միմյանցից օտարում: Սա տեսանելի էր նաև Սոթքի 18 համայնքների միավորման դեպքում:

Խոշորացված համայնքի ներսում բնակավայրերի տարանջատությունը, կոմունիկացիաների ու դրանցից օգտվելու բնակիչների հնարավորությունների, գյուղական և քաղաքային մտածելակերպի ու քաղաքացիական ակտիվության էական տարբերությունները դժվարություններ են առաջացնում Կոմբինատի թողած սոցիալական բացասական ազդեցությունների դեմ համատեղ պայքարելու, խնդիրները քննարկելու հնարավորության հարցերում:

Ինչպես նաև, խոշորացման հետևանքով առաջ է եկել ազդակիր համարվել-չհամարվելու, թույլ ազդակիր և ուժեղ ազդակիր գնահատվելու չափորոշիչների վերանայման, ճշգրտման խնդիրը:

Ելնելով վեր նշված խնդիրների հրատապ լուծման կարիքից և նրանից, որ ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու առաքելությունը վերապահված

է քաղաքացիական հասարակության դերակատարներին, վերջիններս, ելնելով իրենց ինստիտուցիոնալ առաքելությունից, բնակչության և ՏԻՄ երի հետ մեծ աշխատանք ունեն կատարելու:

Կոմբինատի գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու ուղղությամբ բնակիչները կատարել են հետևյալ առաջարկություններ՝

ԿԱՊԱՆ քաղաք

1. ԱՃԹՆ շրջանակներում հրապարակային դարձնել հանքարդյունաբերական ձեռնարկության կողմից ընդերքից հանքաքարի արդյունահանման ամենամյա ծավալները
2. ԱՃԹՆ շրջանակներում հրապարակային դարձնել մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների կողմից ընդերքից արդյունահանված և մշակված հանքաքարերի որակական ցուցանիշները՝ խտանյութերում առկա թանկարժեք մետաղների պարունակության մասին տվյալները
3. Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից պետբյուջե և ՏԻՄ փոխանցվող գումարների չափի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել բնակչությանը
4. Փոխել բնապահպանական վճարների հաշվարկման մեխանիզմները՝ ավելացնելու արտանետումների դիմաց բնապահպանական վճարի չափը, որը կստիպի արդյունաբերողին քիչ աղտոտել, ինչպես նաև, բնապահպանական վճարների հաշվարկման նոր մեխանիզմները մշակելիս, հաշվի առնել համայնքի/շրջակա միջավայրի վրա մի քանի ձեռնարկությունների գումարային ազդեցությունը և սամանափակել այդ ձեռնարկությունների գումարային արտանետումները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում
5. Արգելել առանց քիմիական և կենսաբանական մաքրման արտադրական ջրերը գետեր լցնելը
6. Սահմանել պատճառված բնապահպանական վնասի չափից բարձր փոխհատուցման գումար, որի դեպքում ձեռնարկությանը ձեռնտու կլինի կանխարգելել վնասի պատճառումը, քան փոխհատուցել այն
7. Բարձրացնել հանքարդյունաբերության ոլորտի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը
8. Ազգայնացնել հանքի 51%-ը հանքի գործունեությունը վերահսկելի դարձնելու նպատակով

9. Թույլատրել ԱՃԹՆ Բազմաշահառու խմբին՝ հանքի տարածք մուտք գործել
10. Ստեղծել տեղական հանրաքվեի ինստիտուտ
11. Հանքի տարածքներն ընդլայնել միայն բնակիչների թույլտվությամբ
12. Կապանի բժշկական կենտրոնին ապահովել ժամանակակից դիագնոստիկ և բուժիչ սարքավորումներով
13. Ընկերության կողմից տարեկան հաշվետվություն ներկայացնել համայնքում արված սոցիալական աջակցության, արդեն արված և նախատեսվող բնապահպանական աշխատանքների մասին:

ԳԵՂԱՆՈՒՇ բնակավայր

1. Պարբերաբար տեղեկացնել բնակչությանը Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքի ազդեցությունների մասին
2. հասցված վնասի հաշվարկ կատարել և փոխհատուցում տրամադրել Գեղանուշ բնակավայրին
3. Վերանորոգել համայնքի ճանապարհը և ջրագիծը
4. Ապահովել խմելու ու ոռոգման ջրի համապատասխան որակը
6. Կոմբինատում աշխատանքի ընդունելիս՝ նախապատվությունը տալ գեղանուշցիներին
7. Անկախ բուժհաստատության կողմից գնահատել բնակչության առողջության վրա պոչամբարի վնասակար ազդեցությունը
8. Իրականացնել հողի և ջրի ուսումնասիրություն՝ պարզելու ծանր մետաղների պարունակությունը:
9. Օրենքները մանրամասն բացատրել բնակչությանը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հարցազրույցներից ստացած նյութի մշակումը և բացահայտումները հնարավորություն տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները՝

ԱՌԱՋԻՆ, Կապանի լեռնահարստացման կոմբինատի գործունեության և Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներ հանդիսացող հանրային լսումների, համայնքային ժողովների ու քննարկումների ժամանակ կոմբինատի ներկայացուցիչները չեն խոսել իրենց գործունեության արդյունքում

համայնքի վրա հնարավոր բացասական սոցիալական ազդեցությունների մասին: Իսկ համայնքի օդին, ջրին, հողին հասցված բացասական սոցիալական ազդեցությունները բնակիչներին այսօր տեսանելի և մտահոգիչ են՝ կապված թե ջրի մաքրության, թե պոչամբարի անվտանգության ու հուսալիության հետ:

ԵՐԿՐՈՐԴ. Կոմբինատի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը միջին մակարդակի է, այն էլ հիմնականում Կապան քաղաքում, որտեղ թե՛ տեղական, թե՛ մայրաքաղաքային բնապահպանական ՀԿ-ները և անհատ իրապաշտպանները որոշակի աշխատանք են տարել: Այդ իսկ պատճառով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքից կապանցիների մի մասը լավատեղյակ է, իսկ գեղանուշչիների 90%՝ոչ:

ԵՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները տեսանելի են քաղաքային բնակչության շրջանում, սակայն այս պահին ԱՃԹՆ գործընթացներում բնակչության և հատկապես գյուղական բնակավայրի բնակչության ընդգրկվելու հնարավորությունները մեծացնելու կարիք կա: Առաջացել են խնդիրներ՝ կապված համայնքների խոշորացման հետևանքով առաջացած ՏԻՄ կազմակերպչական ընթացակարգերի անկատարության, հանքի համար ուժեղ և թույլ ազդակիր համայնք համարվելու չափորոշիչների ճշգրտման, մտածելակերպային ու քաղաքացիական հասունության էական տարբերությունների հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

<u>ԱՌԱՋԻՆ.</u> ՏԻՄ-ի կողմից համայնքների խոշորացման հետևանքով նախկին ազդակիր, նոր միացած բնակավայրերի միասնական կենսագործունեության ապահովման համար ՏԻՄ կազմակերպչական ընթացակարգերի անկատարության հաղթահարում, ազդակիրության մակարդակի որոշման չափորոշիչների վերանայում, նույն խոշարացված համայնքում մարդկային և ենթակառուցվածքային ռեսուրսների ընդգծված անհավասարության հաղթահարմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:

ԵՐԿՈՐԴ. Բնակչության համար կոմբինատի գործունեության տեսանելի և մտահոգիչ սոցիալական բացասական ազդեցությունները՝ կապված թե ջրի մաքրության, թե պոչամբարի անվտանգության ու հուսալիության հետ, հաղթահարել՝ հասցված վնասներին համարժեք բնապահպանական վճարների չափի վերանայմամբ, հստակեցմամբ և ըստ այդմ օգտագործմամբ:

ԵՐՐՈՐԴ. Կոմբինատի հարուցած սոցիալական բացասական ազդեցությունները հաղթահարել և կանխարգելել Սյունիքի մարզի բնապահպանական ՀԿ-ների և առանձին անհատ մասնագետների կողմից բնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացման և բնակչության ձևակերպած խնդիրների շուրջ Կոմբինատի հետ ուղղակի կապի հաստատման միջոցով, ինչը կհաղթահարի ՏԻՄ-Կոմբինատ ուղիղ կապում նախկինում շրջանառված ի վնաս բնակչությանը պայմանավորվածությունները:

ՉՈՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում քաղաքային բնակչության շրջանում մասամբ տեսանելի ընդգրկման հնարավորությունները և գյուղական բնակավայրի բնակչության ընդգրկվելու թույլ հնարավորությունները մեծացնելու համար բնապահպանական ՀԿ-ների և անահատ մասնագետների կողմից բնակիչների բոլոր շերտերի կրթում և միասնական ճակատով ԱՃԹՆ գործընթացներում ընդգրկում:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող

«Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ գործընթացի լիարժեք մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի(USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»(ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: